

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ և ՓՈՐՁԱԳԵՏ
ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՈՒՐԴ**

«10» մարտի 2020 թ.

N 10 - Լ

Ո ՐՈՇՈՒՄ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ և ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2021Թ. ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԵՐԹԱԿԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՁԵՎԸ, ՎԱՅՐԸ, ԱՄՍԱԹԻՎԸ, ԺԱՄԸ և ՆԱԽՆԱԿԱՆ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 13-րդ և 14-րդ բաժինները, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի անցկացման և պատվիրակների ընտրության կարգի 3-րդ և 6-րդ բաժինները՝ Պալատի խորհուրդը որոշում է.

1. Հրավիրել Պալատի հերթական ընդհանուր ժողով:
2. Հաստատել հերթական ընդհանուր ժողովի ձևը, վայրը, ամսաթիվը և ժամը՝ համաձայն հավելված 1-ի:
3. Հաստատել Պալատի հերթական ընդհանուր ժողովի նախնական օրակարգը՝ համաձայն հավելված 2-ի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված 1

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության խորհրդի 2021թ. մարտի 10-ի N 10 – Լ որոշման

<i>Պալատի հերթական ընդհանուր ժողովի ձևը</i>	Պալատի անդամ աուդիտորների և փորձագետ հաշվապահների ֆիզիկապես համատեղ հավաքի ձևով,
<i>Պալատի հերթական ընդհանուր ժողովի անցկացման վայրը</i>	Երևան, Կոմիտաս 49/3, II-րդ հարկի մեծ դահլիճ
<i>Պալատի հերթական ընդհանուր ժողովի ամսաթիվը</i>	2021թ. մայիսի 1
<i>Պալատի հերթական ընդհանուր ժողովի ժամը</i>	10:00-մասնակիցների գրանցում 10:30 – ժողովի սկիզբ

Հավելված 2

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության խորհրդի 2021թ. մարտի 10-ի N 10 - Լ որոշման

Պալատի հերթական ընդհանուր ժողովի

ՕՐԱԿԱՐԳ

1. Պալատի հերթական ընդհանուր ժողովի քարտուղարի ընտրություն:
2. Պալատի հերթական ընդհանուր ժողովի հաշվիչ հանձնաժողովի ընտրություն:
3. Պալատի խորհրդի և աշխատակազմի գործունեության, ինչպես նաև տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ Պալատի վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունների հաստատում:
4. Պալատի հերթական ընդհանուր ժողովի գումարմանը նախորդող տարվա Պալատի գործունեության տարեկան հաշվետվության հաստատում:
5. Պալատի ընդհանուր ժողովի գումարմանը նախորդող տարվա Պալատի գույքի օգտագործման տարեկան հաշվետվության հաստատում:
6. Պալատի տարեկան ֆինանսական հաշվետվությունների ներկայացում
7. Պալատի անդամների մուտքի վճարների և անդամավճարների չափի հաստատում:
8. Պալատի կառուցվածքի հաստատում
9. Պալատի խորհրդի անդամների ընտրություն:
10. Պալատի վերստուգիչ հանձնաժողովի անդամների ընտրություն: